

փոփոխ ու հաստատուն են, թէպէտ և յամառ ու կոպիտ ըրլան։ Այսպիսիները թէ որ աղէկ ձամբու մէջ դըրուին, ինչուան վերջը հաստատ կը մնան առաքինութեանց մէջ։ նոյնպէս ալ թէ որ աղէկ կրթութիւն չառնուն, զիրենք չար ձամբէն դարձընելը ան կարելի կ'ըլլայ։ Ասոնց հետ քաղցրութիւն պէտք է բանեցընել. և թէ որ մէյմը առաքինութեան համը առնեն, իրենք իրենցմէ առաջ կ'երթան։ — Ինդհակառակն, ան տղաքն որ փոփոխամիտ են ու ամէն բանի մէջ շուարած կերպ մը ունին, զանոնք միշտ արթնութեամբ ու ապահով ձամբով առաջ տանելու է. թէ որ քիչ մը ատեն իրենք իրենց մնան, դիմացնին ինչ առաջնորդ ելլէ՝ անոր կը հետեին, ու մէկէն կը խոտորին իրենց սովորական ձամբէն։ Ասոնց վրայ երկայն ժամանակ կրթութիւն ընելու է որ բարի սկզբունքները իրենց սովորութիւն մը դառնան. ան ատեն այնչափ վախ չըլլար թէ շուտով մոլորին։

Զ. Տղաք կան որ բնութեամբ արիասիրտ ու յանդուգն են, ու բանէ մը չեն վախնար։ Կատ զգուշանալու է այսպիսիներուն հետ խստութեամբ վարուելէն. վասն զի սաստիկ բարկացող ու անսանձ կ'ըլլան։ Վաղցրութեամբ դաստիարակը դիւրաւ կրնայ շահիլ զիրենք. բայց երբեմն քիչ մը խստութիւն կրնայ բանեցուիլ, որպէս զի իրենք զիրենք աղատ կարծելով՝ յանդուգն չըլլան, ու դաստիարակին հեզութքը երես չառնեն։ — Խսկ երկիւզած ու վախկոտ աղաքը միշտ կը վախնան որ չըլլայ թէ յանցանքի մէջ իյնան, իրենց վարժապետին աչքէն ելլեն ու պատիժ կամ յանդիմանութիւնն ։ Ասոնց հետ վերջի աստիճանի անուշութեամբ ու քաղցրութք պէտք է երթալ, միշտ ծիծաղերես ցուցընել, և ամէն հնարք ընել որ իրենց դաստիարակին վրայ մեծ վստահութիւն առնեն, ու սրտերնէն ան փուճ երկիւզա փարատի։ Աստ տեղւոյն նաև դովելու ու յորդորելու է ասոնք։

բայց գովեստը քիչ պիտի ըլլայ, որպէս զի երես չելլեն ու չհպարտանան։ Է. Բաղրը վերի ըսուած յատկութիւններով խառն բնաւորութիւն ու նեցող տղոց հետ վարուելու համար՝ խառն ոձը բռնելու է. այսինքն քաղցրութիւն և ծանրութիւն, խստութիւն ու գթութիւն։ բայց միշտ քաղցրութիւնն ու հեղութիւնը աւելի պիտի ըլլան։ Ասոնց յայտնի է որ ամէն տղաք քիչ շատ՝ իրենց բնութիւնը կը փոխեն. ուստի խիստ հարկաւոր է իրենց բնութեան փոփոխիլը ձանչնալ, ու ըստ այնմ վարուիլ իրենց հետ։ ապա թէ ոչ, շատ վնասակար կ'ըլլայ ան ատեն առջի ոձով վարուիլը. վարպետ նաւապետը քամիին փշելուն յարմար առագաստը կը դարձընէ։

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՒՏԵՐ

Կարագը Շեշուագոյն ներկելու էրպ։

Տեղ կայ որ կարագը ինչուան որ գեղին գոյն չունենայ՝ ամենուն ընդունելի չըլլար. աս գոյնը տալու համար շատը քրքում՝ կը գործածեն. բայց մենք աւելի դիւրինն ու քիչ գնով ըլլալիքը դնենք։

Խողվէ շատ մը գեղին գագիֆէ չլցի կամ իւն լցի ըսուած ծաղկեն. ասոնց թերթերը՝ այսինքն ծաղկին գունաւոր տերևները փրցուր, ու հողէ ամանի մը մէջ դրած՝ բերանը ամուր գոցէ, ու մառանը դիր։ Վասի մը ամսէն ետքը աս տերեները հալած խէժի պէս թանձրիեկ գեղին ոսկիի գունով նիւթ մը կը գառնան։ Ասոնիթը կը գործածեն ձմեռուան մէջ կարագը գունաւորելու համար. այսինքն որչափ որ կ'ուզես գեղինցընել այնչափ կը դնես ինոցիին մէջ ասնիւթէն, ու սովորական կերպով կը հարես. խսկ չափը փորձով կը սորվուի։

Այ գոյնը միշտ կը մնայ եղին մէջ, և
ամենեին վնասակար չէ : Կարագը
կը նայ գունաւորուիլնաւ գինիի ոգի-
քը կարագին մէջ լուծելով :

Կաշէ Յեռացները լուալու հերու :

Չերւոցն երբ՝ շատ օգտակար են
մարդուս ձեռութները ամառուան
տաքութիւն ու ձմեռուան ցրտութե-
նէն պահելու համար . և որովհետեւ
կաշիէ ձեռնոցները շատ սուղ են, ա-
նոր համար կը նային որ աւելի ուրիշ
նիւթերէ հիւսեն . բայց ասով ալ
կաշի ձեռնոցները միշտ յարգի են, ո-
րովհետեւ շատ կը դիմանան, և մար-
դուն ձեռքը աւելի զով կը պահեն :
Հիմա տեսնենք թէ աս ձեռնոցները
աղտոտին նէ՝ ինչպէս լուալու է որ
նորէն առջի փայլունութիւննին առ-
նեն :

Այ բրդէ լաթի կտոր մը ու անուշ
ջրի մէջ աղէկ մը թաթխէ, ու ջրէն
հանէ ցամքեցու. ետքը հասարակ ձեր-
մակ սապոնի կտոր մը առ, ու բրդեղէ-
նին երկու երեսին ալ աղէկ մը քսէ :
Հետոյ ձեռնոցներէն մէկը ձեռքդ ան-
ցուր, ու ան լաթ-ով աղէկ մը շփէ, մա-
նաւանդ աղտոտ տեղուանքը և ուր որ
կ'ուզես աւելի փայլուն ընել : Սորս
հինգ վայրկեան շփելէն ետքը՝ երբոր
ձեռնոցը աղէկ մը կը մաքրուի՝ զգու-
շութեամբ ձեռքիդ վրայէն հանէ,
առանց շատ քաշքըշելու, ու գնդասե-
զով² կամ թել մը գերձանով չուանէ
մը կախէ շուք տեղ . յետոյ մէկալ
ձեռնոցն ալ նոյնպէս մաքրէ ու փուէ
որ չորնայ : Իիչ մը չորնալէն ետքը ան
կտորն որ շատ թթվեր ես՝ կոնճմբտած
կ'ըլայ, առաձգութիւն ալ կը կորսուն-
ցընէ, այսինքն մատուըները կը քա-
շուին կը նեղնան . աս բանիս համար
կլոր պղտիկ գաւազաններ կ'առնես ու
մատերուն տեղուանքը կը խոթես որ

բացուին, կամ չէ նէ ձեռքիդ վրայ
կ'անցընես : Այ կերպով ինչուան վեց
եօթը անգամ կը նան մաքրուիլամէն
կաշի ձեռնոցները, մանաւանդ ձեր-
մակներն ու դեղինները . միայն գի-
տելու է որ քանի որ խիստ շատ չէ աղ-
տոտած՝ ան ատենը մաքրուի :

Ինչու հայար ցուրդ առէն ածելիներուն վրայ
ինչուան որ շունչ չպաս՝ դիւրաւ չէն իրէր :

ԱԱՆ զի մանրացուցով տեսնուած
է որ ածելիին՝ բերանը սառ կապելով
սղոց՝ գարձեր է . ուստի շունչ մը տա-
լուդ պէս՝ ան սառը կը հալի ու բե-
րանը կը շտկի :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԿՈՒԹԻՒՆ

ԱՃԽԱԲՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Փըրենորիս :

Փւլութեամբ քաղաքը, որ հիմա ի-
տալերէն իիւրենցա կամ իիւրենցէ կը-
սուի, աշխըրքիս անուանի ու գեղե-
ցիկ քաղաքներէն մէկն է : Որոշ չպիտ
ցուիր թէ որ ատեն շինուած է . ո-
մանք կը հաստատեն թէ հին իշրու-
րացւոց շէնքն է, որ Հռովմայեցիք
առին անոնցմէ : Իշրերը գոթացւոց
ու Լոնգոթարտացւոց արշաւանքնե-
րով շատ աւրուեցաւ . մեծն կարո-
լոս նորոգեց, ու հիւպատոսական կա-
ռավարութիւն մը հաստատեց մէջը՝
որ չորս հարիւր տարի քշեց : Երեք-
տասաներորդ գարուն մէջ աս հասա-
րակապետութիւնը աւելի կարգաւո-
րուեցաւ ու ծաղկեցաւ . բայց 1343ի
ներքին խոռվութիւնները այնչափ շատ-
ցան որ Կափոլիի թագաւորը կուալ-
թերի անունով դուքսը խրկեց՝ իբր